

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻ ՀՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Զաքարյան Հովհաննես

«Տաթև» ԳԿՀ

hovzakaryan@yahoo.com

DOI: 10.54503/978-9939-970-08-0-43

Բանալի բառեր. հայոց լեզու, հ.-ե. նախալեզու, հնաբանություն, ձայնդարձ, արմատային տարբերակներ, սկզբնահնչյուն, աճական, ածանց:

Նախաբան

Հոդվածը նախ և առաջ նվիրված է **խաղող** բառի ստուգաբանությանը, որ կատարվել է դրա բարբառային **հավող** տարբերակի հիման վրա: Վերջինս դիտարկվել է որպես հնաբանություն, որից առնմանությամբ առաջացել են բառի գրական ձևը և բարբառային մյուս տարբերակները: Այս մոտեցմամբ **հավող**-ը՝ որպես բնիկ հայերեն բառ, անմիջականորեն բխեցվել է հ.-ե. $*(a)u(e)-$ «վազ, թուփ, ճյուղ» պարզական արմատից: Հոդվածում վերլուծված և այդ նույն արմատի հիման վրա ստուգաբանված կամ վերաստուգաբանված են նաև մի շարք այլ բառեր՝ հիմնականում բուսանուններ: Հատկանշական է, որ այդ բառերը գրային հայերենում սկսվում են *վ-*, *ու-*, *(/h)ա-* կամ *ո-* հնչյուն(ներ)ով: Դրանց թվում կան նաև միայն բարբառներում պահպանված բառեր:

Հետազոտության ընթացքը և արդյունքները

Կան դեպքեր, երբ բարբառներում պահպանված է լինում ավելի հին մի ձև, քան ավանդված է գրաբարից: Ստորև կներկայացվի այդպիսի դեպքերից մեկը:

Խաղող բառը մինչ այժմ համարվում է հավաստի ստուգաբանություն չունեցող: Ստուգաբանության փորձեր եղել են: Այսպես,

Լազարդը նկատել է, որ դպտ. **ալօլի** «խաղող» այնքան նման է հայերենին, որ մեկը մյուսի մայրը պետք է որ լինի: Յ. Արշեզը ևս նշել է դպտ. **ալօլի**, **հալօլի** «խաղող», սանս. **հալա**, **հալալա** «գինի» բառերի նմանությունը հայերեն **խաղող**-ին: Սակայն Հ. Աճառյանը այս նկատառումները համարել է անհավաստի: Այնուամենայնիվ Գ. Զահուկյանը **խաղող** բառը կասկածով համարել է փոխառություն խուռ. հալսի «մի պտուղ» ձևից: Անգլերեն վիքիբառարանը համարել է փոխառություն խուռի-ուրարտ. հալսի ձևից՝ դա էլ ենթադրելով սեմական փոխառություն:³ Լ. Հովհաննիսյանը գրել է, որ այդ բառի ծագումը պարզ չէ, համենայն դեպս դրա հ.- ե. ծագումը փաստարկված չէ:⁴

Արդի հայերենում **խաղող** բառը տվյալ բույսի միակ ընդհանրական անվանումն է: Համենայն դեպս Ա. Մուքիսայանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանում» (Ե., 1967) որևէ այլ համարժեք չկա: Լ. Հովհաննիսյանը կարծում է, որ նախագրաբարյան շրջանում «խաղող» են նշանակել նաև **գինի**, **որթ**, **այգի** բառերը (ԼՀ, 94-98), որոնք այժմ հստակորեն այլ իմաստներ ունեն, թեև պահել են կապը «խաղող» հասկացության հետ:

Խաղող բառը լայն տարածում և բազում տարբերակներ ունի բարբառներում: Այդ տարբերակների մի քանի առանձնահատկություն կարելի է նշել.

ա. **խ** սկզբնահնչյունի փոխարեն **հ`** *հաղող*,

¹ Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հհ. 1-4, Ե., 1971-1979 (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 2, էջ 321-322, խաղող:

² Տե՛ս **Գ. Զահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987 (այսուհետև՝ ՀԼՊ), էջ 426, **Գ. Զահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010 (այսուհետև՝ ՀՍԲ), էջ 313:

³ Տե՛ս Wiktionary.- <https://en.wiktionary.org/wiki> (այսուհետև՝ ՎԲՍ):

⁴ Տե՛ս **Լ. Հովհաննիսյան**, «*Խաղող*» հասկացության իմաստային դաշտի հին անվանումների շուրջ.- «Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության հարցեր», պրակ Ա, Ե., 2022, էջ 87-98 (այսուհետև՝ ԼՀ), էջ 93:

բ. միջին՝ **դ** բաղաձայնի փոխարեն **վ՝ հավոդ, խավոդ,**

գ. **դ** վերջնահնչյոռունի փոխարեն **խ՝ խավոխ,**

դ. վերջընթեր **ռ** ձայնավորի փոխարեն **ու** կամ **է** կամ երկբարբառ (իւ, էո, ուէ, ըէ)՝ **խավուդ, խավէդ, հավէոդ, խադիւդ, խավուէդ, խավըէդ:**

Միակ գրեթե անփոփոխ բաղադրիչը առաջին ձայնավոր **ա**-ն է:

Երկրորդ ձայնավորի փոփոխականությունը մտածելու տեղիք է տալիս, որ գործ ունենք ածանցի հետ՝ **-ոդ/-ուդ/-էդ** և այլ տարբերակներով: Այդ կարծիքին նպաստում է նաև Զեյթունի բարբառի **խադ** տարբերակը (ՀԱԲ, 2, 322), որ թերևս բուն արմատի մի դրսևորումն է:

Այս տարբերակների միջև առկա **խ-հ, դ-վ** և **դ-խ** համապատասխանությունները կարող են հետևանք լինել ինչպես առնմանության, այնպես էլ տարնմանության՝ նայած թե որ տարբերակն ենք ընդունում որպես սկզբնաձև:

Եթե սկզբնաձևը **խադոդ**-ն է, որում բաղաձայնները միայն **դ** կամ **խ** են, ապա բարբառային տարբերակները պիտի առաջանային տարնմանությամբ: **Խ-հ** համապատասխանության առիթով պիտի նկատել, որ Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ բարբառային հնչյունական հատկանիշերի շարքում կա հետևյալ կետը.

18. **Խ**-ի դիմաց տարնմանական **հ՝** բառի մեջ հաջորդող **դ**-ի առկայության դեպքում (խ>հ)՝ խադ (>հադ), խադալ, խադադ, խադոդ⁵:

Հ. Աճառյանի թվարկած բարբառային տարբերակների (ՀԱԲ, 2, 322) համեմատությունը Գ. Ջահուկյանի՝ նշված հատկանիշն ըստ բարբառների բաշխման աղյուսակի տվյալների հետ (ՀԲՆ, 51-62)

⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972 (այսուհետև՝ ՀԲՆ), էջ 47:

խաղող բառի դեպքում հստակ օրինաչափություն չի բացահայտում, այսինքն՝ տարնմանության վարկածը չի հաստատվում:

Ինչ վերաբերում է **դ-վ** համապատասխանությանը, ապա ենթադրյալ տարնմանության վարկածը դժվար է հիմնավորել: Եթե տեղի է ունեցել տարնմանություն, ապա ինչո՞ւ հենց **դ>վ** և միայն **դ>վ**: Խնդիրն այն է, որ տարնմանությունը ենթադրում է տարբերակների ավելի մեծ բազմազանություն ու ցրվածք: Իսկ **դ-վ** տարնմանությունը տիպական չէ: Համենայն դեպս մեզ չի հաջողվել գտնել դրա մեկ այլ օրինակ:

Վերջին՝ **դ-խ** համապատասխանությունը տարնմանությամբ բացատրելի չէ:

Կարծում ենք՝ շատ ավելի հավանական ու բացատրելի է հակառակ ուղղությամբ՝ առնմանությամբ զարգացման վարկածը, որը ենթադրում է մի ավելի հին սկզբնաձևի վերականգնում, իսկ դա արդեն ստուգաբանական հարցեր լուծելու հեռանկար է բացում:

Առկա տարբերակների շարքում հնարավոր ամենահին սկզբնաձևը կարող է լինել **հավող (հաուղ)** տարբերակը, որից հետադարձ լրիվ առնմանությամբ պիտի առաջ եկած լինի **հաղող** ձևը, իսկ հետադարձ մասնակի առնմանությամբ՝ **խավող** և մանավանդ **խաղող** ձևերը: Այդպիսի տարնմանության մեկ այլ հայտնի օրինակ է **հեղձ (հեղդ) > խեղդ** անցումը⁷ (ՀՄԲ, 326):

Այսպիսի առնմանական անցմանը նպաստում է նաև Գ. Զահուկյանի ներկայացրած հետևյալ հնչյունական հատկանիշը.

⁶ Գ. Զահուկյանը փաստորեն, որպես **խ>հ** տարնմանության նմուշ) բերել է ընդամենը երեք գրեթե համանուն արմատներ: Ավելի շատ են ոչ տարնմանական **խ>հ** անցման օրինակները՝ *խառնել, խուրձ, խռով, ծախել, նախիր, փոխել, զլուխ, ձախ, սոխ* (նույն տեղում):

⁷ Որ **խեղդ** ձևն է **հեղձ**-ից, հաստատվում է այն փաստով, որ **հեղձ**-ը չունի բարբառային տարբերակներ (ՀՄԲ, 3, 78), իսկ **խեղդ**-ի բարբառային տարբերակների թվում կա նաև միջանկյալ **հեղդ** տարբերակը (ՀՄԲ, 2, 357):

16. Բառասկզբի **հ**-ի դիմաց ոչ առնմանական **խ** (**h>խ**)՝ *հա (>խա), հազար, հայ, հայր, հասկանալ, հարյուր, հարս(ն), հետ, հինգ, հիվանդ* (ՀԲՆ, 47):

Հատկանշական է, որ **հավող (հավէօղ)** հնաբանությունը պահպանվել է իրարից հեռու մի քանի բարբառներում (Երև, Պրտ, Ննխ, Հմշ, Ասլ), այդ թվում՝ համեմատաբար մեկուսացած Համշենում:

Միջանկյալ **հաղող (հաղուղ, հաղէօղ)** ձևերը կան՝ Ղրբ, Ալշ, Ախց, Ազլ, Շմ, Սեբ, **խավող (խավօխ, խավուխ, խավէղ, խավուէղ, խավըէղ)** ձևերը՝ ՀՃ, Ջղ, Սլմ, Վն, Խրբ, Կր, Պլ, Ռ, Այն, Սլ, Տիգ, Ակն, Մրդ: Զեյթունի բարբառում, ինչպես նշվեց, կա նաև **խաղ** տարբերակը (ՀԱԲ, 2, 322):

Վստահաբար առաջընթաց առնմանության արդյունք են նաև **դ>խ** անցմամբ առաջացած *խավոխ, խավուխ* ձևերը, թեև այս անցումը տվյալ դեպքում երկրորդական հանգամանք է:

Այժմ, երբ կարծես համոզված կարող ենք պնդել, որ մյուս բոլոր տարբերակների համեմատ սկզբնաձև է **հավող**-ը, փորձենք ստուգաբանել դա:

Բառի հնչյունական կառուցվածքը հուշում է, որ **հ** սկզբնահնչյունը կարող է լինել նախահավելված: Առանց **հ**-ի կունենանք ***աւող** սկզբնաձևը, որտեղ առկա է **ւ** ձայնորդ սկզբնահնչյուն: Բառի այսպիսի հնչյունակազմը թույլ է տալիս ենթադրելու ***աւ-** արմատ և **-ող/-ուղ/-էղ** ածանց (հմմտ. *անձ-ող «ածուխ», յ-աջ-ող, պտ-ուղ, ցնց-ուղ, խճ-ուղ, սանդ-ուղ, ած-ուղ/ի, տաշ-էղ, աս-էղ, ուղ-էղ, մժ-էղ, բոկ-էղ* և այլն):

Այս ***(h)աւ-** (<*h₂au-) արմատը կարելի է նույնացնել հ.-ե. ***(a)u(e)-** «վազ, թուփ, ճյուղ» պարզական արմատին: Սրա տարբերակներից ու ածանցյալներից են՝ ***wey-** «ճյուղ, ոստ», ***weyət-** «ուռենի», ***werb-** «երկար ու ճկուն ոստերով թուփ», ***wi(n)g'-** «ծփնի,

կնձնի», *weiks- «մղամուճ» և այլն: Դրանցից են սերված լատ. vītis «վազ, որթատունկ; ոստ» (<*weyət-), հ.բ.գերմ. reba «որթատունկի ճյուղ», մ.բ.գերմ. rebe «որթատունկ, խաղողի այգի» և այլն:

Այս ստուգաբանությունը թույլ է տալիս ենթադրելու, որ հայերենից են փոխառված խուռ. haluli [<*հաղուղ-], դպտ. aloli, haloli [<*(h)աղող-], գուցե նաև սանս. hala, halala [<*(h)աղ-] ձևերը: Այսպես պնդելու իրավունք է տալիս նաև այն փաստը, որ մշակովի խաղողի վերաբերյալ ամենահին տվյալները վերաբերում են Հայկական լեռնաշխարհին: Մասնավորապես խաղողի գինու հնագույն (Ք. ա. 4-րդ հազարամյակի) արտադրամասը հայտնաբերվել է Վայոց ձորի Արենի-1 (Թոչնի) քարանձավում¹⁰:

Այդ նույն *^(a)u(e)- արմատի մի տարբերակից են Է. Ադայանն¹¹ ու նրա հետևողությամբ Գ. Ջահուկյանը բխեցրել **արգատ** (**արքատ**) «որթատունկի էտած ճյուղեր» բառը՝ **արգատ** <^{*}րգատ <^{*}գրատ <^{*}ṛəd- <^{*}w(e)rād- «ճյուղ, արմատ, ոստ, ճիպոտ» ստուգաբանական բանաձևով (Ադ., 30-31, ՀԼՊ, 156, 263, ՀՄԲ, 87): Հ. Աճառյանն այս բառը չի ստուգաբանել (ՀՄԲ, 1, 304):

Խաղող և **արգատ** բառերի այսպիսի ստուգաբանությունը, այսինքն՝ կապելը հ.-ե. *^(a)u(e)- «վազ, թուփ, ճյուղ» պարզական արմատի հետ, բանալի է իմաստով հարակից մի շարք այլ հայերեն բառերի ծագումը բացատրելու համար: Այդ բառերն են՝ **վազ**, **ուռ**, **ուրագ**, **ուրց**, **որթ**, **վարդ**, **վարսակ**, **վարձոխ**, **վարսամ**, **վարունգ**,

⁸ St' u S. Nikolaev, *Database of Indo-European etymology*. - <http://starling.-rinet.ru/cgi-in/response.cgi?root=config&morpho=0&basename=\data\ie\piet&first> (այսուհետև՝ Նիկ.):

⁹ Այլ ածանցյալներից են՝ ռուս. вишня, «բալ(ենի)», հ.բ.գերմ. wihsel «կեռաս(ենի)», ստորին գերմ. wispel «մոշ, բալ» (Նիկ., *weiks- «մղամուճ»), հ.անգլ. wīðig, պարսկ. bīd, ռուս. ива «ուռենի», ռուս. ви́твина «ճյուղ, ճիպոտ» (Նիկ., *weyət- «ուռենի») և այլն:

¹⁰ St' u <https://ru.wikipedia.org/wiki/Вино>

¹¹ Է. Ադայան, *Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974 (այսուհետև՝ Ադ.):

վարսանգ, վարսանդ, նուարխոտ, նուարտակ, վիկ(ն), վուշ, ոսպն, ունդ, ուղեշ (աղեշ), աղուրի, տոլի, վալ, վայդն, վոք, հաւիճ, հաւտ, հաւ(ուկ):

Անդրադառնանք դրանց հերթականությամբ:

Վազ «որթ, խաղողի ուտ» բառը Հ. Աճառյանը կապել է **վազ** «ընթացք, ցատկ»-ի հետ: Իմաստային անցումը հիմնավորել է՝ համեմատելով ռուս. побер «ընծյուղ» (берать «վազել»-ից), գերմ. sprosse «ծիլ» (sprut «դուրս ցատկել»-ից), հայ. *ցռուկ* «նոր ծիլ» (*ցռկել* «դուրս ցատկել»-ից) բառերի հետ (ՀԱԲ, 4, 293): Գ. Ջահուկյանը ավելացրել է նաև *ոստ – ոստյուն* գուգահեռը (ՀԱԲ, 701): Ամեն ինչ թվում է համոզիչ:¹² Սակայն կարելի է ենթադրել հակառակ անցումը՝ *վազ*-ից *վազք, ոստ*-ից *ոստյուն* և այլն, մանավանդ որ կան *ծիլ – ծլկել* «աննկատ փախչել», *ճող/ճիւղ – ճողոպրել* «մի կերպ փախչել-պրծնել» անցումները: Եվ այս դեպքում կարելի կլինի ձևակերպել **վազ** <*(a)ւթ-ցհ- <*(a)ւ(e)- «վազ, թուփ, ճյուղ» ստուգաբանական բանաձևը, որում *ցհ-ն աճական է: Ի դեպ, նշված իմաստային անցումների փոխարեն համանունություն դիտարկելու համար համընկնումների դեպքերը անհավանական շատ են:

Ուտ «1. խաղողի որթի բարունակ, 2. ուղեշ, ոստ, ընծյուղ, բարակ ու ճկուն ճյուղ, 3. ուռենի, 4. գեղձի»¹³ (որից՝ **ուռն** «սեպ, երիթ», **ուռ(ն)** (բրբռ. **վուռ**) «մուրճ, կռան»¹⁴, բրբռ. **օռնի** «ուռի, ուռենի») բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 3, 607): Գ. Ջահուկյանը կաս-

¹² **Վազք** արմատը Հ. Աճառյանը համարել է չստուգաբանված՝ մերժելով կապը *weg* h- «վարել, քշել» (Պոկ.) արմատի հետ, իսկ Գ. Ջահուկյանը համարել է իրանական փոխառություն, որը նույնպես մերժել է Հ. Աճառյանը (ՀԱԲ, 4, 292-293, ՀԱԲ, 701):

¹³ Իմաստի համար տե՛ս նաև Մալխ., 3, 605, ուտ 1):

¹⁴ **Ուռ** «ճյուղ» – **ուռ** «մուրճ» իմաստային անցման համար հմմտ. **մորճ** «ճյուղ» – **մուրճ** «կռան»:

կածով կապել է հ.-ե. *or-s-, *or-n-՝ *er- «շարժել, բարձրացնել» արմատի հետ, որ այնքան էլ համոզիչ չէ (ՀՄԲ, 751): Առաջարկում ենք **ռռ(ն)** <*ւր-no- <*ւ-ro- <*(a)ւ(e)- «վազ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *ro-ն և *no-ն ածանցներ են: Ինչ վերաբերում է բառի բազմիմաստությանը, ապա դա բնորոշ է նաև այլ լեզուների (հմմտ. թթր. tal «1. ճյուղ, 2. ուռի» (ՀՄԲ, 3, 607)):

Ուրազ (բրբռ. **վրաք, ուրեք, ուրոք, ուրիւզ**) «փայտ տաշելու կոթավոր գործիք» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են փոխառությունն ասուր. (աքքադ.) uraku(m) «քարտաշ» ձևից (ՀՄԲ, 3, 613-614, ՀՄԲ, 752): ՎԲԱ-ն համարել է փոխառությունն աքքադ. uraku «քարագործ» բառից: Պորտասարի մշակույթը (ն.Ք. 10-րդ հազարամյակ և ավելի վաղ) վկայում է, որ առաջինը քար ու փայտ տաշել սկսել են հնդեվրոպացիները, հետևաբար ամենայն հավանականությամբ նրանց լեզվից է սեմական լեզուներին անցել այս բառը: Նաև նկատի ունենալով **ռռ(ն)** «մուրճ» բառի հետ ձևային և իմաստային (երկուսի էլ կոթը փայտե ձող է) մերձավորությունը՝ առաջարկում ենք **ուրազ** բառը համարել բնիկ հ.-ե. ծագման՝ հետևյալ բանաձևով. **ուրազ** <ուր-ազ <*ւ(e)-r- <*(a)ւ(e)- «վազ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը (**-ազ/-ոզ** ածանցի համար հմմտ. *փափազ/-աք, նոր-ոզ, փոր-ոզ/-ոք* (ՀՄԲ, 809), *ոլ-ոզ/-ոք* և այլն): Այս բանաձևում *r-ն ածական է:

Ուրց (**ուոց, ուրձ**) «մի համեմաբույս» բառը Հ. Աճառյանը (ՀՄԲ, 3, 619), Գ. Ջահուկյանը (ՀՄԲ, 754) և ՎԲԱ-ն համարել են անհայտ ծագման: Նկատի ունենալով այս բառի բուսանուն լինելը և ձևային մերձավորությունը **ռռ** «ընձյուղ և այլն» բառի հետ՝ առաջարկում ենք **ուրց** <*ւր-sk'- <*ւ(e)-r- <*(a)ւ(e)- «վազ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *r-ն և *sk'-ն ածականներ են:

Որթ (բրբ. **ուրթ**) «խաղողի տունկ, խաղողենի, վազ» բառը (որից՝ բրբռ. **վորթոթ** «խաղողի կտրած ճյուղեր») Հ. Աճառյանը կապել

է հ.-ե. *porthu- «հորթ, երինջ, երեխա» արմատի հետ՝ որպես իմաստային գուգահեռներ հիշելով երինջ «1. հորթ, 2. խաղողի որթի մատ», հուն. μόσχος «1. հորթ, 2. ընձյուղ, շառավիղ, ծիլ» զարգացումները (ՀՄԲ, 3, 579-580): Գ. Ջահուկյանը, հետևելով Պեդերսենին և Պոկոռնիին, բխեցրել է հ.-ե. *ort-, *ortho- «խաղողի որթ» կամ *port^ho- (*pert^h-) «ճյուղ, ընձյուղ» արմատից (ՀՄԲ, 606-607): Նկատենք, որ *ort- արատը Պոկոռնին տվել է «գինի» իմաստով և ընդամենը 2 ածանցյալով՝ հայ. *որթ* «վազ», ալբ. *hardi* «որթատունկ»¹⁵: Իսկ *pert^h- «ձող; շիվ, ընձյուղ» արմատը տրված է 3 ածանցյալով՝ հայ. *որթ* «վազ», հուն. πτόρθος «տնկի», լատ. *pertica* «ձող» (Պոկ., № 1503): Ընդ որում՝ հայ. *որթ* բառը երկու դեպքում էլ տրված է առանց վերապահության, առանց կասկածի, առանց փոխադարձ հղման, առանց «կամ ... կամ»-ի: Իսկ դա նշանակում է «և ... և»՝ առանց հիմնավորման ու բացատրության: ՎԲԱ-ն այս կարծիքները ներկայացնելուց գատ որևէ նոր դիրքորոշում չի արտահայտել: Այս հակասական տարակարծությունները և բարբառային ձևերը նկատի ունենալով՝ առաջարկում ենք մեկ այլ տարբերակ՝ որպես սկզբնաձև վերցնելով բարբառներում պահպանված **ուրթ** և գրական **որթ** ձևերի միջինը՝ **ուրթ** ձևը. **ուրթ** <*ur-th- <*u(e)-r- <*(a)u(e)- «վազ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *r-ն և *th-ն աճականներ են: Նույն արմատից կարող է բխեցվել նաև վերոհիշյալ ալբ. *hardi* «որթատունկ» բառը:

Վարդ «մի ծաղկատեսակ» բառը Հ. Աճառյանն ըստ Հյուբշմանի համարել է փոխառություն պիլ. ենթադրյալ *vard < հ.պրսկ. *varda ձևից, «որ աւանդուած չէ»¹⁶: Դա բխեցրել է հ.-ե. *ur̥dho- «փշոտ թուփ,

¹⁵ Տե՛ս **J. Pokorny**, *Indogermanisches etymologisches Wörterbuch*. Bern-München, 1959.- <http://dnghu.org/indoeuropean.html> (այսուհետև՝ Պոկ.), № 1431, *ort-:

¹⁶ Գ. Ջահուկյանը ենթադրել է իրանական *vard սկզբնաձև (ՀՄԲ, 706): ՎԲԱ-ն նույնպես համարել է իրանական փոխառություն՝ համեմատելով պարթ. w'r /wār/ ձևի հետ:

փշաթուփ» արմատից, որն էլ իր հերթին հանգեցրել է **uredh-* / **uerədh-* «աճել, բարձրանալ, բարձր»¹⁷ նախաձևին (ՀԱԲ, 4, 317-318): Իմաստի զարգացման առումով կարծես համոզիչ է, սակայն այդպիսով չի բացահայտվում պարզական արմատը: Բայց կարևորն այն է, որ հ.-ե. **urdho-* «փշոտ թուփ, փշաթուփ» նախաձևից անմիջականորեն և օրինաչափորեն բխում է նաև հայ. **վարդ** բառը: Հետևաբար այդ ուղիղ ու բնական ճանապարհը թողած՝ հարկ չկա իրանական սկզբնաձևեր հորինել հայերեն բառին միջնորդավորված ծագում վերագրելու համար: Այսպիսով կարող ենք որոշ ճշգրտումներով ներկայացնել ստուգաբանական հետևյալ բանաձևը. **վարդ** <*(a)*urdh-* <*(a)*ur-dh-* «փշոտ թուփ, փշաթուփ» <*(a)*u(e)-r-* <*(a)*u(e)-* «վազ, թուփ, ճյուղ»: Այս բանաձևում **r-*ն և **dh-*ն աճականներ են: Այս բանաձևի հիման վրա կարելի է պնդել, որ հայ. **վարդ** բառը բնիկ հնդեվրոպական ծագում ունի և փոխառություն չէ այլ լեզվից: Իսկ որոշ ցեղակից լեզուների հետ ձևային նմանությունը բնական է ու բավարար պատճառ չէ փոխառություն ենթադրելու համար: Եվ ընդհանրապես, երբ որևէ բառի ծագում կարելի է հավասարապես բացատրել երկու կերպ՝ բնիկ հ.-ե. կամ փոխառյալ, ապա առողջ տրամաբանությամբ նախընտրելի է առաջին մոտեցումը, իսկ փոխառյալ լինելը նախընտրելու համար անհրաժեշտ են հավելյալ լուրջ լեզվական ու արտալեզվական փաստարկներ, որ տվյալ դեպքում չկան:

Վարսակ «հացաբույսի տեսակ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 325): Գ. Ջահուկյանը ենթադրել է իրանական փոխառություն՝ առանց նախաձև նշելու (ՀԱԲ, 708): ՎԲԱ-ն համարել է **վարս** «ծամ, մազ» բառի ածանցյալ՝ որպես իմաստային զուգահեռ նշելով **աշորայ** «տարեկան (հացաբույս)» բառը՝ դա կասկածով

¹⁷ Հմմտ. Պոկ., № 2176 *urdh-*, *uredh-* «աճել, բարձր»:

համարելով սեմական փոխառություն «վարս» նշանակող մի ձևից: *Վարսակ*-ը *վարս*-ի հետ կապելու փորձեր արել են նաև ՆՀԲ-ն, Պետերսոնը, որոնք մերժել է Հ. Աճառյանը (նույն տեղում): *Վարսակ*-ի այլալեզու համարժեքներից են՝ լատ. *avena*, լիտվ. *aviža*, լատվ. *auzas*, հ.պրուս. *wyse*, նախասլավ. **ovъsъ*, ռուս. *овѣс*, հուն. *οίγνλωψ*, որոնք, ըստ ՎԲԱ-ի, հավանաբար ունեն ենթաշերտային ծագում: Բայց այդ բոլորը կարող են օրինաչափորեն բխեցվել *(a)յ(e)- «վագ, թուփ, ճյուղ» նախաձևից: Մասնավորապես հայերենի ստուգաբանական բանաձևը կլինի վարս-ակ <*(a)յթ-s- <*(a)յ(e)-r- <*(a)յ(e)- «վագ, թուփ, ճյուղ»: Այս բանաձևում *r-ն և *s-ն աճականներ են, **-ակ**-ը՝ ածանց:

Վարձոխ (վարձող, վարժող, բրբռ. վարժիս) «վայրի խոտեղեն»¹⁸ բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 4, 323, ՀՄԲ, 707): Հնարավոր է, որ սա բարդ բառ է, որի երկրորդ բաղադրիչի **ձոխ/ձող/ժող/ժոխ** տարբերակները **ճիւղ/ձող** արմատի ձևափոխություններ են: Առաջին՝ **վար-** բաղադրիչի ստուգաբանությունն է՝ <*(a)յ(թ)-r- <*(a)յ(e)- «վագ, թուփ, ճյուղ»:

Վարսամ «սուսամբար (անուշախոտ բույս)» բառը Հ. Աճառյանը համարել է արևելյան փոխառություն՝ առանց ստույգ աղբյուր նշելու, այլ միայն համեմատելով թրք. *marsema*, *mársemani* նույնանշանակ ձևերի հետ (ՀԱԲ, 4, 325): Գ. Ջահուկյանը ևս համարել է «փոխառություն արևելյան մի աղբյուրից (ՀՄԲ, 708)՝ առանց ստույգ ձև նշելու: Որպես բուսանուն՝ կարելի է կապել *(a)յ(e)- «վագ, թուփ, ճյուղ» նախաձևի հետ՝ հետևյալ ստուգաբանական բանաձևով. **վարս-ամ** <*(a)յ(թ)-r- <*(a)յ(e)- «վագ, թուփ, ճյուղ» (**-ամ/-ոմ/-ում/-եմ/-իմ** ածանցի համար հմմտ. *թառ-ամ*, *թարշ-ամ*, *խար-ամ*, *խաշ-ամ*,

¹⁸ Որոշ աղբյուրներ համարել են վարսակ-ի հոմանիշ (ՀԱԲ, 4, 323):

խորշ-ում, խոր-ում «չոր խոտի խրճիկ», կնգ-ում, խոհ-եմ, համ-եմ, ուշ-իմ և այլն):

Վարունգ (վարունկ) «սողացող կամ մազլցող երկար ցողունով մի բույսի պտուղ» բառը Հ. Աճառյանը, հետևելով Հյուբշմանին, համարել է փոխառություն «իրանեան անձանթ մի ձևից, որի այլ ներկայացուցիչներն են պիլ. *vātrang, vātrēng, vātrēg*, պրս. *bādrang, bādirang*» ևն (ՀԱԲ, 4, 324): ՎԲԱ-ն կրկնել է գրեթե նույնը: Գ. Զահուկյանը համարել է «փոխառություն իրանական աղբյուրից, բայց բուն աղբյուրը չի ճշտված» (ՀՄԲ, 707-708): Առաջարկում ենք բնիկ ծագման վարկած՝ **վար-ունգ** <*(a)u(ə)-r- <*(a)u(e)- «վազ, թուփ, ճյուղ» (**-անգ/-ինգ/-ունգ** ածանցի համար հմմտ. *ծլ-անգ «փերթ», պահ-անգ, ժառ-անգ, դրաս-անգ, վարս-անգ «սանդի տոռն, թակ», տրտ-ինգ, ծլ-ունգ «ոստյուն»* և այլն):

Վարսանգ «սանդի տոռն, թակ, փայտե մուրճ» (Մալխ.19, 4, 315, ՀԼԲԲ²⁰, Զ, 38) բառը ստուգաբանական բառարաններում չկա: **Ուռ(ն)** «մուրճ» բառի հետ իմաստային կապի հիման վրա առաջարկում ենք **վարս-անգ** <*(a)u(ə)-r- <*(a)u(e)- «վազ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը (**-անգ/-ինգ/-ունգ** ածանցի համար տե՛ս **վարունգ** բառի առիթով): Ի դեպ, ըստ ՀԼԲԲ-ի, որոշ բարբառներում այս բառն ունի նաև **վարսամ** և **վարսանդ** տարբերակները (նույն տեղում):

Վարսանդ «ծաղկավոր բույսերի բազմացման իգական գործարան» (Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976) բառը նշված չէ ստուգաբանական բառարաններում: Արդի հայերենում դա բուսաբանական եզրույթ է: Հետևաբար առաջարկում ենք **վարս-անդ** <*(a)u(ə)-r- <*(a)u(e)- «վազ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը (**-անդ/-ինդ/-ունդ** ածանցի համար հմմտ. *են-անդ, արգ-*

¹⁹ Ս. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հհ. 1-4, Ե., 1944-1945 (այսուհետև՝ Մալխ.):

²⁰ *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հհ. Ա-Է, Ե., 2001-2012 (այսուհետև՝ ՀԼԲԲ):

անդ, կալ-անդ, հիվ-անդ, զարգ-անդ, մարմ-անդ, խախ-անդ, աղ-անդ, սար-անդ-ոստ, շո-ինդ, փոխ-ինդ, ծն-ունդ, սեր-ունդ, ել-ունդ, սն-ունդ, մկ-ունդ և այլն):

Նուարխոտ և **նուարտակ** խոտաբույսի անունների **նուար** բաղադրիչը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 3, 469, ՀՄԲ, 573): Դա դիտարկելով որպես բաղադրյալ կազմություն՝ առաջարկում ենք **նուար** < *նի-ուար < *uā-r- < *(a)u(a)- «վազ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *r-ն աճական է: **Ն(ի)-** «ներքև, ցած» նշանակությամբ նախածանցի համար հմմտ. *ն-իւթ* < *նի+հիւթ, *ն-կուղ*, *ն-շող*, *ն-շոյլ*, *ն-այել* < *նի+հայել, *ն-եցուկ* < *նի+յեց+ուկ < յենուկ, *նստակ* < *նի+յստակ, *նի-ստ* < *նի+սիտ, *նաւազել* < *նի-աւազ-ել «ալիազի տակ թաղել՝ ծածկել՝ թաքցնել» (ՀԱԲ, 3, 434) և այլն:

Վիկ(ն) (վիզն) «վայրի ոլոռ, խոլորձ» բառը Հ. Աճառյանը համեմատել է հուն. βίκιον, βικία, լատ. vicia համարժեքների հետ և ենթադրել բոլորի համար մի ընդհանուր անհայտ աղբյուր (ՀԱԲ, 4, 339): Գ. Ջահուկյանը նույնպես ենթադրել է փոխառություն անստույգ աղբյուրից (ՀՄԲ, 711): Լատիներեն vicia բառը Պոկոռնին կապել է հ.-ե. *uēi-g- «ծովել, կորանալ» արմատին: ՎԲԱ-ն ենթադրում է հ.-ե. *wey-k- «ծովել, կորանալ» կամ *weh-y- «շրջել, ոլորել, փաթաթել» կամ նման մի այլ նախաձև: Ընդ որում՝ ՎԲԱ-ում հայերեն համարժեքն ընդհանրապես քննարկված չէ: Մինչդեռ հայ. **վիկն** բառը՝ որպես բուսանուն, հնարավոր է ստուգաբանել **վիկն** < *(a)uē-g^w-no- < *(a)u(ē)- «վազ, թուփ, ճյուղ» բանաձևով, որտեղ *g^w-ն աճական է, *no-ն՝ ածանց: Կարծում ենք՝ նույն արմատից կարելի է բխեցնել նաև հունարեն ու լատիներեն նշված համարժեքները:

Վուշ «1. կտավ՝ կանեփ (բույս), 2. կտավի թել, 3. խծուծ» բառը Հ. Աճառյանը (ՀԱԲ, 4, 348), Գ. Ջահուկյանը (ՀՄԲ, 713) և ՎԲԱ-ն համարել են անհայտ ծագման: Այս բուսանվան համար առաջարկում

ենք **վուշ** <*(e)uō-k'w- <*(a)u(e)- «վագ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *k'w-ն աճական է:

Ոսպն (բրբռ. **ուսպ, տսպ, վուսպ, վուէսպ, վըսք** են) (ընդեղենի տեսակ) բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 3, 568, ՀՄԲ, 604): ՎԲԱ-ն հավանական է համարել կապը հուն. ὄσπριον «ընդեղեն» անստույգ ծագման բառի հետ: Այդ նմանությունը նկատված է նաև ՆՀԲ-ում, սակայն փաստորեն մերժված է Հ. Աճառյանի կողմից (ՀԱԲ, 3, 568): Հայերեն բարբառային տարբերակները հուշում են, որ այդ բառը կարող է ունենալ **ոսպն** <*վոսպն <*(a)uosp-no-²¹ <*(a)uo-s-p- <*(a)u(e)- «վագ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *s-ն և *p-ն աճականներ են, *no-ն՝ ածանց: Իմաստի զարգացման առումով հմմտ. ստորև **հալիճ** բառի նաև «ոսպ» նշանակությունը և **ունդ** բառը:

Ունդ (ունտ, հունդ, հունտ) «բույսի ուտելի սերմ՝ հատիկ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 3, 601): Գ. Ջահուկյանը նշել է՝ «չունի հավաստի ստուգաբանություն» (ՀՄԲ, 749-750): ՎԲԱ-ն նույնպես համարել է անհայտ ծագման: Նկատի ունենալով վերոհիշյալ **ոսպ** և ներքոհիշյալ **հալիճ** բառերի հետ իմաստային կապը՝ առաջարկում ենք **ունդ** <*(a)uō-d- <*(a)u(e)-n- <*(a)u(e)- «վագ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *d-ն և *n-ն աճականներ են²²:

Ուղեշ (ուղեշ, աղեշ, աղոշ, աղոշ) «1. խաղողի նորածիլ ճյուղ, որթի մատ, 2. ճյուղ, ծիլ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 3, 595, ՀՄԲ, 748): Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք **ուղեշ** <*(a)u-l- <*(a)u(e)- «վագ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *l-ն աճական է: **-էշ/-ոշ** ածանցի համար

²¹ Այս սպ <*sp անցման համար հմմտ. առա-սպել <*spel-, սպառնալ <*spr- (ԼՔՀԼ, 4, 558-559):

²² Այս **նդ** <*nd անցման համար հմմտ. թունդ <*stund-, խանդ <*khnd-, սանդ-ուղ <*sqand-՝ ռնգային ձայնորդից հետո (ԼՔՀԼ, 4, 532):

հմատ. *քերք-եշ* «մարմնի թեփ», *բրդ-ոշ*, *վո-ոշ* «խյուս, լափ» և այլն: Ինչ վերաբերում է բառասկզբի **ու-ա** անցմանը, ապա դա ըստ երևույթին նախաձևի ***ա** երկհնչյունի երկու տարբեր զարգացումներ են. մի դեպքում ընկել է **ա**-ն, մյուս դեպքում՝ **ա** (**ու**)-ն:

Աղուրի (աղոր, բրբռ. աղուրա) «1. վազի երկար ճյուղ տաշտաթաղի համար, 2. տնկի, 3. սերունդ, շառավիղ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 1, 135, ՀՄԲ, 39): Սա կարելի է համարել *ուղեշ/աղեշ/աղոշ*-ի նույնարմատ մի տարբերակ՝ ստուգաբանական հետևյալ բանաձևով. **աղ-ուր-ի** <*a(յ)l- <*aլ(e)-l- <*(a)լ(e)- «վազ, թուփ, ճյուղ», որտեղ *l-ն աճական է, **-ուր**-ը և **-ի**-ն՝ ածանցներ (**-ուր** ածանցի համար հմատ. *թափ-ուր*, *մր-ուր*, *բլ-ուր*, *բար-ուր*, *կտ-ուր*, *կծոխ-ուր* և այլն):

Տողի (տողի) «խաղողի որթ» միջին հայերենում վկայված բառը Հ. Աճառյանը համեմատել է ուտ. tul «խաղող» և արաբ. davālī «խաղողի մի տեսակ» բառերի հետ՝ նշելով, որ «այս երեքի յարաբերությունը դժուար է որոշել» (ՀՄԲ, 4, 416): ՎԲԱ-ն համարել է փոխառություն արաբ. dawālī «խաղողի որթ» բառից: Սակայն նկատենք, որ դա հնչյունապես համոզիչ չէ: Գ. Ջահուկյանը անհնար չի համարել փոխառությունը ուրարտ. uḫli (uḫdi) «խաղողի այգի» ձևից (ՀԼՊ, 432, ՀՄԲ, 731): ՎԲԱ-ն համեմատել է նաև աքքադ. tillatu «խաղողի որթ» բառի հետ: Եթե բիայներենը (ուրարտերենը) դիտարկենք որպես հայերենի պատմական մի փուլ²³ կամ ենթադրենք հակառակ ուղղությամբ փոխառություն, ապա կարելի է առաջարկել **տողի** <*ղոլի <*ղուլի <*uḫli (u-ի անկումով) <*uḫ-ul-i <*լ(e)-d- <*(a)լ(e)- «վազ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *d-ն աճական է, *-ul-ը և *-i-ն՝ ածանցներ (*-ul-ի համար հմատ. *զլ-ուլ*, *թաթ-ուլ*, *կափ-*

²³ Հմտ. Գ. Ջահուկյան, *Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին*, «Պատմա-բանասիրական հանդես», 2000, հմ. 1, էջ 124-129:

ուլ, բալ-ուլ, տան-ուլ, փմփ-ուլ, սր-ուլ-իկ, զանգ-ուլ-ակ և այլն): Իսկ ուտ. տլ բառը պետք է համարել փոխառություն հին հայերենից:

Վալ «շիվ» բարբառային բառը (ՀԼԲԲ, 9, 10) ստուգաբանական բառարաններում չկա: Իմաստից և ձևից ելնելով՝ առաջարկում ենք **վալ** <*(a)u-a-l- <*(a)u(a)- «վազ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *l-ն աճական է:

Վայդն «մի բույս» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 4, 300, ՀՄԲ, 703): Իմաստից և ձևից ելնելով՝ առաջարկում ենք **վայդն** <*uai-l-no- <*(a)u(a)- «վազ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *l-ն աճական է, *no-ն՝ ածանց:

Վոք «թեղի, պտղի, կնձնի» բուսանունը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 4, 348, ՀՄԲ, 713): Իմաստից և ձևից ելնելով՝ առաջարկում ենք **վոք** <*u-o-k^w- <*(a)u(o)- «վազ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը: Այս բանաձևում *k^w-ն աճական է²⁴:

Հալիճ (հաւէճ, հաւլէջ) «անուշահոտ համեմ» բառը (Մալխ., 3, 80) Հ. Աճառյանը համարել է փոխառություն արաբ. havāi՝ «համեմունք» ձևից (ՀԱԲ, 3, 72): Գ. Ջահուկյանը կրկնել է գրեթե նույնը: Սակայն դա ըստ երևույթին վերաբերում է բարբառային **հավաջ** «աղացած կարմիր պղպեղ» բառին (ՀՃ, 9թ, Մր2): Մինչդեռ **հաւլէջ**-ը (Խրք) նշանակում է «խաղողի տերև» և «հարդից չհանած ոսպ, սիսեռ» (ՀԱԲ, 3, 72) և այլն: Ենթադրելի է երկու տարբեր ծագման հարանունների բաղարկություն: Դրանցից երկրորդի համար, նկատի ունենալով **հաւ-ող** բառի հետ ձևային նմանությունը, կարելի է առաջարկել **հաւ-իճ/-էճ** <*(h)u-l- <*(a)u(e)- «վազ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը: Այս բանաձևում առկա **-իճ/-էճ/-ոճ/-ուճ** ածանցի համար հմմտ. *պատ-իճ, ուտ-իճ, լվ-իճ, կապ-իճ, կոպ-իճ, կավ-իճ,*

²⁴ Այլալեզու զուգահեռներից են՝ ռուս. вѣз «ծփնի, կնձնի», անգլ. wich-elm «փշոտ կնձնի», լիտվ. vinkšna, լատվ. viksna, ալբ. vith, vidhë «կնձնի» (Նիկ. *wi(n)g'- «ծփնի, կնձնի»):

կտր-իճ, հատ-իճ «հատ, կորիզ, բշտիկ», բվ-էճ, բքո-էճ «գիսախոփ», բլ-ոճ, կլ-ոճ, պարկ-ուճ, բրդ-ուճ, կճ-ուճ և այլն (**ճ-ջ** անցումը բարբառներին բնորոշ ձայնեղացման հետևանք է):

Հաւտ (houտ) «որթի էտած ուտ» բառը Գ. Ջահուկյանը համարել է **«հաւտ-ի՝ ւ-ով աճած տարբերակ»** (ՀՄԲ, 455): Միանգամայն հնարավոր է: Սակայն նկատի ունենալով **հաւ-ոդ, հաւ-իճ** բառերի հետ ձևային նմանությունը՝ առաջարկում ենք ստուգաբանական ևս մի վարկած՝ **հաւտ** <(h)աւ-տ <*(a)ս(e)-d- <*(a)ս(e)- «վագ, թուփ, ճյուղ»: Այս բանաձևում *d-ն աճական է:

Հաւ (հաւուկ) «գութանի թրի վերի ծայրի ծակի մեջ խրած սեպը» (Մալխ., 3, 79) բառն, ըստ ձևի, **հաւ-ոդ, հաւ-իճ, հաւ-տ** բառերի հիմքն է: Ըստ իմաստի՝ համընկնում է վերոհիշյալ նույնարմատ **ուռն** «սեպ, երիթ» բառի հետ (սեպը հնում եղել է մեծ մասամբ փայտից՝ ոստից): Հետևաբար կարելի է առաջարկել **հաւ** <*(a)ս(e)- «վագ, թուփ, ճյուղ» ստուգաբանությունը:

Հաւ- հիմքով կան մի շարք բարդ բուսանուններ՝ **հավլիլիկ** «խաղողի խիստ մանրահատ ողկույզ» (ՀԼԲԲ, Գ, 251), **հաւկտիկ, հաւածոր, հաւածոր, հաւամբզի, հաւկեռաս** և այլն, որոնցում հիմքը կա՛մ **հաւ** «թռչուն» համանունն է (քանի որ կան նաև **հավուկտիկ, հաւուկեր, հավու տոտիկ, հաւակորեկ, հաւի խոտ** և նման ձևեր), կա՛մ բաղարկված է դրա հետ:

Եզրակացություն

Այսպիսով ներկայացրինք հայերեն մի շարք բառեր (*վագ, ուռ, ուրագ, ուրց, որթ, վարդ, վարսակ, վարճոխ, վարսամ, վարունգ, վարսանգ, վարսանդ, նուարխոտ, նուարտակ, վիկ(ն), վուշ, ոսպն, ունդ, ուղեշ (աղեշ), աղուրի, տոլի, վալ, վայդն, վոք, հաւիճ, հաւտ, հաւ(ուկ)*), որոնք մինչ այժմ համարվել են կա՛մ հավաստի

ստուգաբանություն չունեցող (անհայտ ծագման), կա՛մ վիճարկելի ստուգաբանությամբ, կա՛մ փոխառություն այլ լեզվից:

Հասկանալի է, որ հոդվածում որպես հ.-է. ծագման բնիկ հայերեն բառեր ներկայացվածներից մի քանիսը *վ* սկզբնահնչյունով են (*վազ*, *վարդ*, *վարսակ*, *վարճոխ*, *վարսամ*, *վարունգ*, *վարսանգ*, *վարսանդ*, *վիկ(ն)*, *վուշ*, *վալ*, *վայդն*, *վոք*), և այդ հանգամանքը մեկնաբանված ու հիմնավորված է որպես օրինաչափ երևույթ, այլ ոչ թե շեղում:

Zakaryan Hovhannes – About one dialectal archaism. – The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, as well as dialectal archaism *հաւոն* («grapes»), puts forward the following new etymologies of words that all come from the PIE root **(a)u(e)-* «vine, bush, branch»: *խաղոն* «grapes» <*h₂au-* <**(a)u(e)-* «vine, bush, branch», *վազ* «grapevine» <**(a)uə-g'h-*, *ուռ(ն)* «1. willow, 2. sprout, 3. wedge» <**ur-no-* <**u-ro-*, *նոք* «thyme» <**u-r-sk'-*, *որթ* «grapevine» <**nurp* <**ur-th-* <**u(e)-r-*, *վարդ* «rose» <**(a)uərdh-* <**(a)ur-dh-* <**(a)u(e)-r-*, *վիկ(ն)* «vetch, vicia» <**(a)uē-g^w-no-*, *լուշ* «flax, linseed» <**(e)uō-k'w-*, *ուղեշ* «branch» <*ուղ-եշ* <**(a)u-l-* etc.

Key words: Armenian, Proto-Indo-European, archaism, vowel gradation, root variants, initial sound, determinative, affix.

Hovhannes Zakaryan, PHD on Philology, Associate Professor, the Head of Linguistic Department of "Tatev" Center of Research and Education, RA.

Закарян Оганес – Об одном диалектном архаизме. – В настоящей статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов, а также диалектного архаизма *hushn* («виноград»), предлагаются следующие новые этимологии слов, которые все происходят от ПИЕ корня **(a)u(e)-* «лоза, куст, ветвь»: *hushn* «виноград» <*hush-n* <**h₂au-* <**(a)u(e)-* «лоза, куст, ветвь», *ush* «виноградная лоза» <**(a)u_ə-g^h-*, *nl₁(u)* «1. ива, 2. побег, 3. клин» <**u_g-* по- <**u_g-ro-*, *nl₁g* «тимьян» <**u_g-r-sk[']-*, *nr₁r* «виноградная лоза» <**nl₁r₁* <**ur-th-* <**u(e)-r-*, *ush* «роза» <**(a)u_ərdh-* <**(a)u_g-dh-* <**(a)u(e)-r-*, *uh₁(u)* «вика» <**(a)u_ə-g^w-* по-, *nl₁* «лён» <**(e)u_ə-k[']w-*, *nl₁t₂* «ветвь» <*nl₁-t₂* <**(a)u-l-* и т. д.

Ключевые слова: армянский язык, праиндоевропейский язык, архаизм, чередование, корневые варианты, начальный звук, детерминатив, аффикс.

Оганес Закарян, к.ф.н., доцент, руководитель лингвистического отдела Научно-образовательного комплекса "Татев", РА.